Առաջին ոստիկանը, որ եկաւ Մուտավաքիլի կողմից, կոչւում է Աբուսայիդ Մուհամմետ իբն Իսուֆ ալ Մարվազի: Սա է մեր պատմագիրների Աբուսեթը՝ «վերակացու հայոց եւ հաւատարիմ ի վերայ հարկաց արքունի»: Տարօն եւ Վասպուրականը ընդդիմանում են: Երբ մօտենում է Տարօնի սահմաններին, Բագարատ իշխանը մարդ է դրկում ընդ առաջ թանկագին նուէրներով՝ «համոզեաւ մի եւանել յերկիրս Հայոց»: Նոյնն է անում եւ Աշոտ Արծրունին:

Աբուսեթ ծածկում է որպէս թէ իր չար յանձնարարութիւնը ընդդէմ հայ իշխանների եւ յայտնում որ իր դալստեան խնդիրն է «հարկ եւ այլ հոգաբարձութիւն»: Սառնում է հարկերը եւ հեռանում:

Աբուսեթ ծանուցանում է Սամառա գործի դրութիւնը: Հայ իշխանները, չուզենալով ընդունել պետական պաշտօնեային, օրինական քայլ չէին անում եւ չեշտում էին իրենց անկախութիւնը: Մերժուած ոստիկանը թերեւս իրաւունք ունէր կասկածելու որ «հակառակ թագաւորութեան բան ընդդէմ լինի հանապազ»: Տեղացի արաբները եւս նոյնն էին շշնջում Աբուսեթին:

Հեռանալուս Աբուսեթը տեղապահ թողեց Մուսէին նրան հաւատալով «զվերակացութիւն աշխարհիս եւ հարկս արքունի»: Մուսէն, Զօրահայի որդին, Աղձնիքում հաստատուած արաբ ցեղի պետն էր: Երեւում է, այս ցեղը կոչւում էր Զուրարիկ: Աղձնեաց Կոստոմ գիւղի մասին խօսելիս Թոմա Արծրունին ասում է որ նա սեփականութիւն էր Զուրարեկն կոչեցեալ ազգի: Սոյդ ընթերցանութենէ Զուրարիկ եւ ցեղի անուն է, ինչպէս կայսիկ, ութմանիկ: Արաբ աղբիւրները Մուսէին կոչում են որդի Զորարայի, փոխանակ հայ Զորահայի: Թւում է թէ դանդաղելու է երկու անունները, Զորահա հօր անունն է, Զորարա՝ ցեղի, որտեղից հայ զուրարիկը:

Մուսէ Բագարատի քեռայրն էր, ուրեմն մօտ ազգական: Երբ ուզում է մտնել Տարօն «արքունի հարկաց պատճառաւ», Բագարատ չէ թողնում: Կռիւ է ծագում, Բագարատին օգնութեան է գալիս Աշոտ Արծրունին, նրա քեռորդին, եւ Մուսէ պարտուած հեռանում է:

Աբուսեթ նշանակել էր Վասպուրականի հարկահաւաք Ալա ամիրային որ կոչւում էր Ծովափի: Հայացրած մականունը այլ բան չէ եթէ ոչ մեղ ծանօթ Զահաֆի, Զահապ, Արաբ կայսիկ ցեղի իշխանական տունն էր:

Բրոսսէ Աբուսեթին եւս համարում է նոյն կայսիկ ցեղից, բայց չի պատճառաբանում իր կարծիքը: Հաւանական է, որ Աբուսեթի մականունը՝ Մարվազի հանել է Մանաւազ-ից, եւ կարծել է որ Մանաւազեան տոհմի ընկկալուածում հաստատուած արաբ ցեղը կարող էր կոչուել նոյն անունով: Այս կերպ Ծովափի ազգական է դուրս գալիս Աբուսեթին:

Ալա հոգաբարձուն, այսինքն՝ հարկահաւաքը, նոյն բախտին է արժանանում, ինչ որ Մուսէն: Արծրունի իշխանները յարձակւում են նրա վրայ եւ քշում երկրից:

Այս ծանր լուրերի վրայ գալիս է Աբուսեթ նոր լիազօրութեամբ, բայց ճանապարհին մեռնում է: Նրա տեղը ամիրապետը նշանակում է Յուսուֆին, Աբուսեթի որդուն: Հայոց 300, Քրիստոսի 851 թիւն էր երբ եկաւ Յուսեփ: Նախորդ՝ 850 տարուայ հարկերը հաւաքել էր Մուսէ, իսկ Աբուսեթ՝ 849 թուի: Ասել է թէ, Աբուսեթի գալուստը եւ խռովութեանց սկիզբը հաշուելու է 849 թուից:

Յուսեփ գալիս է Հայաստան Ատրպատականի կողմից, մտնում է Աղբակ եւ նստում Ադամակերտ, Արծրունեաց ոստանում: Աշոտ Արծրունին հեռանում է Մարդաստան, բողոքելով արաբ զօրավարի բռնութեան դէմ: Նամակով դանդատւում է որ թագաւորների պարտքն է հոգ տանել երկրի վրայ եւ հսկել հարկերի կանոնաւոր դանձմանին եւ ոչ ասպատակել եւ աւարառութիւն անել: Աշոտի մայրը Մսակերի դուստրը, անձամբ ներկայանում է Յուսեփին եւ համոզում է խաղաղել:

Արաբ ամիրան թողնում է Վասպուրական եւ Բզնունիքի վրայով գալիս Խլաթ՝ Բագարատ իշխանի դէմ: Սա աւելի անզգոյշ է դրսնելում քան Աշոտ Արծրունին եւ հաւատալով ամիրայի ողոքիչ խօսքերին, որպէս թէ կանչում է երկրի իշխանութիւնը նրան յանձնելու, գնում է նրա մօտ: Յուսեփ շղթայում է եւ դրկում Սամառա, իսկ ինքը իջնում Մուշ ամրերելու այնտեղ: